

Կանխագիտակ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԼԱՑԱՌԱԿԱՆԱՑ



ԿՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Քիչ 6



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ՀԱՆՐԱՊԵՏ ՀԱՆՐԱԿԻԴԱԳՈՒՅՆ HANRAKIDAGUE
ՀԱՐԱԲԱԹԱԿԱՆ ՄՈՋԵՐԵՐԸ JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ Ե || Տ ՓԵՏՐՈՒԱՐ 1903

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

ԽՈՍԱՆՆԵՐԻ

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ընդհանուր ծանոթություններ. — Խաչուէի հունձքը. — Մշակութեան
զարգացումը. — Առեւտրական տեսակները. — Կեղծը. —
Վաճառականություններ

Խաչուէնին թուի մ'է, միշտ կանաչ, եթովպական ծագումով,
որ արեւադարձային երկիրներու մէջ միայն կ'աճի եւ կը վերա-
բերի տորոնազգիներու (rubiacées) ընտանիքին: Տերեւները սրա-
ծայր են եւ փայլուն կանաչ: Ծաղիկները, ճերմակ կամ քիչ մը
վարդագոյն եւ հոտաւէտ, տերեւներուն անութին տակ կը խմ-
բուին: Պտուղը, որ կը յաջորդէ անոնց, կեռասի ձեւ ու խոշո-
րութիւն ունի: Այս պտուղը, որ նախ դեղինի կամ ճերմակի կը
զարնէ, յաջորդաբար կ'ըլլայ կանաչ, կարմիր եւ վերջապէս սեւի
զարնող կարմիր՝ երբ հասուննայ: Կը պարունակէ դեղնագոյն եւ
հոյզային միա մը, որ կը չըջապատէ երկու պտիկ հատիկներ կամ
միջուկներ, իրենց տափարակ կողմէն իրարու փակած, և երբեմն
ալ միակ կըր հատիկ մը: Այս հատիկները, որք եղջերակերպ
պատեանով մը չըջապատուած են, կը կազմեն խաչուէն երբ ան-
ջատուին իրենց պատեանէն որ հատիկին մասը չի կազմեր: Հա-
տիկին մաս կալմողը վրան գտնուած նուրբ մաշկն է: Խաչուէնին
կը պտղաբերի այն տեղերու մէջ միայն ուր բարեխառնութիւնն
առնուազն 10°է եւ 25—30 սանդիկրատը չանցնիր: Ուստի զառի-

Թափ հողերու վրայ կը մշակեն զայն, արեւելքի դէմ: Նախ տըն-կարանի մէջ կը սերմանեն եւ տունկին բուսնելէն 12 կամ 14 ամիս ետքը բուն տեղը կը փոխադրեն: Երրորդ կամ չորրորդ տարին է որ խահուէնիները կ'սկսին պտուղ տալ, որ կը հասունայ ծաղիկներուն բացումէն չորս ամիս ետքը: Հասունալուն պէս, ձեռքով կը քաղեն: Որովհետեւ ծաղիկները տարին ի բուն կը բուսնին, հետեւապէս հունձքը վը կատարուի ամէն ատեն: Խահուէնին 30—40 տարի բերք կուտայ:

Խահուէ. — Հատիկները պէտք է որ մաքրուին իրենց միսերէն եւ եղջերակերպ պատեանէն: Ասկէ ծագում կ'առնեն երկու որոշ գործողութիւններ, — մատում եւ կեղեւում: Մատումը կը կատարուի մեքենաբար: Հատիկներն յետոյ մէկ երկու օրի չափ կը ձգեն ջուրի մէջ, որպէս զի միջուկին փակած մասերն ալ անջատուին: Ապա ուժով մը կը խառնեն ջուրին մէջ եւ արեւին դնելով կը չորցնեն: Իսկ կեղեւումը կ'ըլլայ մեքենայի մը միջոցաւ որ եղջերակերպ պատեանը կը խլէ կը հանէ:

Խահուէի գործածութեան ընդհանրացումը. — Խահուէի գործածութիւնն ընդհանրացած էր նախ Արաբիոյ մէջ: Թուականը կարելի չէ ճշտել գիտնալ: Ծամբորդներ եւրոպա մտցուցին 17րդ դարուն մէջերը: Խահուէ ծախելու յատուկ առաջին հաստատութիւնը բացուեցաւ ի Լոնտոն, 1652ին: Ուրիշ մը բացուեցաւ ի Մարսիլիա, 1670ին եւ ուրիշ մ'ալ ի Բարիզ, 1672ին:

Խահուէի մշակութեան զարգացումը. — 17րդ դարուն, եգիպտոս եւ Արաբիա միայն խահուէ կ'արտադրէին, զոր վնէնտիկցիք եւ ձենովացիք կը բերէին եւրոպա: Հոլանտացիները, որ խահուէի վաճառականութեամբ կ'զբաղէին, ծավալի իրենց գաղթավայրն հարստացուցին՝ խահուէնի տնկելով հոն: Լուի ԺԴ-ի օրով այս մշակութիւնը մտցուեցաւ նաեւ Մարդինիք, ուր Տէքլիէօ աւունուն նաւաստի մը բերաւ խահուէնի մը, զոր առած էր Բարիզի բուսաբանական պարտէզի ջերմանոցներէն, ուր կը մշակուէր իբր հետաքրքրական բան մը: Տէքլիէօյի բերած տունկերէն մին միայն անվնաս հասաւ ի Մարդինիք: Այս տունկն էր որ ծնունդ տուաւ ընդարձակ տնկարաններու որք Անդլիաններն ու հարաւային Ամերիկան հարստացուցին: Ֆրանսական Անդլիանց մէջ խահուէի մշակութիւնն ահագին աճում ստացաւ: 1789ին, Սէն Տօմինիկի մէջ խահուէի տարեկան արտադրութիւնը 70 միլիոն ֆրանք արժեց, մինչ Մարդինիք 7 միլիոն ֆր. միայն կ'արտադրէր: Որովհետեւ անգլիական եւ սպանիական գաղթավայրերը քիչ խահուէ միայն կ'արտադրէին, հետեւապէս այս բերքը Ֆրանսական գաղթավայրերէն կ'արտաթուէր, գլխաւորապէս Պոնտոյէն, ուրկէ

գնումներ կ'ընէին օտար վաճառականք: Բայց յետոյ, պարագաներու բերմամբ, խահուէի մշակութիւնը ծանր հարուած կրեց Անդիլեանց մէջ: Այսօր խահուէ կուգայ Պրէզիլիայէն, Հայիդիէն, Հնդկաստանէն, Կեդրոնական Ամերիկայէն եւ Սոնտի կղզիներէն: Ովկիանիոյ (Սուամադրա, Ճավա եւ Մանիլա) խահուէները մեծ մասամբ կը զրկուին Պաղատիայէ: Ճավայի մէջ հնձուած բոլոր խահուէներն այս նաւահանգիստը կ'ըրեւին:

Առեւտրական արժեք. — Խահուէի մը առեւտրական արժեքը գնահատելու համար պէտք է գիտնալ ապրանքին ո՛ւր տեղէն եկած ըլլալը, քննել ձեւը, խոշորութիւնը, գոյնը, հոտը, համը եւայլն: Խահուէի մը ո՛ւր տեղէն եկած ըլլալը հասկնալէ ետք, պէտք է գիտնալ թէ մի եւ նոյն տեղէ եկող խահուէները կրնան որակի կողմէ շատ տարբեր ըլլալ, վասն զի որակը կախում ունի հողին բնութենէն, հոռնձքին քաղուած եղանակէն, հատիկներուն հասունութեան վիճակէն, անոնց պահպանութեան համար տարուած խնամքներէն եւայլն: Հատիկներու ձեւը շատ փոփոխական է եւ կրնայ վերածուիլ երեք գլխաւոր դիբերու, որք են Մոխ, Պուրպուր եւ Մարդիքիք: Մոքայի հատիկները փոքր են եւ մեծ մասամբ կըրոր: Պուրպուր ըստուած հատիկները երկար են, սրածայր եւ միջին մեծութեամբ: Գալով Մարդիքիքի հատիկներուն, լայն ու խոշոր են եւ տափարակ երես ունին: Բայց պէտք է կրկնել որ ձեւն յաճախ կը խաբէ մարդ, վասն զի կը պատահի որ մի եւ նոյն ծառէն քաղուած հատիկները կը յարմարին երեք դիբերուն ալ: Խահուէին հատիկներն 9—12 հազարորդամէդր երկայնութիւն եւ 6—8 հազարդմ. լայնութիւն ունին: Գոյնը խիստ փոփոխական է եւ կտխում ունի հողին բնութենէն, հասունութեան աստիճանէն եւայլն: Խոնաւ հողի վրայ բուսած խահուէն ընդհանրապէս մութ գոյն կ'առնէ, իսկ բարձրագիւր հողերու վրայ բուսածը՝ բաց գոյն: Խահուէն քանի՜ հիննայ, այնչափ աղէկ է: Զորացման որոշ աստիճանի մը հասնելէն ետքը միայն կ'ստանայ իր ընտիր յատկութիւնը: Կարելի է խահուէն բնական կերպով չորցնել: Բայց ասոր համար պէտք է 5 տարի պահել: Սովորաբար կը չորցնեն հովին առջեւ կամ ջերոցի մէջ դնելով: Մինչ մէկ երկու տարիէ ի վեր քաղուած խահուէները 680—700 կրամ կը կշռեն առ մէն մի խորանարդ տասնորդամէդր, բոլորովին չորերը 500 կրամ միայն կը կշռեն: Խահուէին ո՛ւրեք գալը կը ճանչցուի հոտէն, բայց վարժութիւն պէտք է: Համին համար ալ այսպէս է: Խահուէներն յաճախ մանր քարերու, կտորած ցորենահատիկներու, փոշիներու եւ ուրիշ օտար մարմիններու հետ խառնուած կ'ըլլան:

(Շարունակելի)

ԱՌԵՒՑՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԱՍԸՆԹԱՑՔ ԱՌԵՒՑՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՏՈՒԹԻՒՆ

1. — ԱՌԵՒՑՐԱԿԱՆ ՀԱՌԱՔԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(Société en nom collectif)

Բաժնեթուղթերու զանազան ձեւեր. — Բաժնեթուղթը կրնայ ըլլալ անուանական, բերողին (au porteur) կամ հրամանի: Այս վերջին ձեւը քիչ կը գործածուի: Բաժնեթուղթն անուանական է երբ անոր մէջ բաժնետէրին անունը կայ: Այն ատեն կրնայ ուրիշի ծախուիլ փոխանցումով կամ յայտարարութեամբ մը, որ կ'արձանագրուի ընկերութեան տոմարներուն մէջ: Բաժնեթուղթը au porteur է, երբ անոր մէջ նշանակուած չէ տիրոջ անունը: Այս ձեւ բաժնեթուղթը ձեռքէ ձեռք կրնայ ծախուիլ: Վերջապէս, բաժնեթուղթն հրամանի է, երբ տիրոջն անունէն ետքը կուգան սա բառերը « Կամ անոր հրամանին »: Այն ատեն կրնայ ծախուիլ փոխանցմամբ: Բաժնեթուղթով կազմուած քոմանտիդ ընկերութեան համար գործադրելի են պարզ քոմանտիդ ընկերութեան սովորական սկզբունքները: Այսպէս, ընկերութիւնը կը վարեն մէկ կամ աւելի ներկայացուցիչ ընկերներ, որոց անունէն կը կազմուի ընկերութեան անունը, եւ բաժնետէրք իրենց բաժնեթղթին արժէքին չափ միայն պատասխանատու կը նկատուին:

Մասնաւոր օրէնք. — Բաժնեթուղթով կազմուած քոմանտիդ ընկերութիւնը, իր ներկայացուցած առաւելութիւններուն պատճառաւ, մեծ զարգացում ստացաւ: Անով ի գլուխ ելան կարեւոր ու օգտակար ձեռնարկներ, բայց մի եւ նոյն ատեն անով ծնունդ առին կարգ մը զեղծումներ ու խաբէութիւններ որք անհրաժեշտ դարձուցին մասնաւոր օրէնսդրութիւն մը:

Կազմութիւն ընկերութեան. — Ընկերային դրամագլխին usorագրումն եւ փառորդին վնարումը. — Բաժնեթուղթ ունեցող քոմանտիդ ընկերութեան մը կազմութիւնը խիստ պայմաններու ենթակայ է: Նախ պէտք է որ ընկերային դրամագլուխն ամբողջովին ստորագրուի: Ընկերային դրամագլուխն ամբողջովին ստորագրուած է կ'ըսուի երբ բոլոր բաժնեթուղթերը տեղաւորուին: Ենթադրենք 200,000 զրդ. դրամագլխով ընկերութիւն մը, որ 200

ղըշնոց բաժնեթուղթեր ունենայ: Ընկերային դրամագլուխն ստորագրուած կ'ըլլայ երբ զանազան անձեր իրենց մէջ բաժնեն 1000 բաժնեթուղթերը, անոնց փոխարժէքը վճարելու յանձնառու ըլլալով: Բաժնետէրին յանձնառութիւնը չի բաւեր միայն: Պէտք է որ մէն մի բաժնետէր իր ստորագրած բաժնեթուղթերուն ընդհանուր գումարին գէթ մէկ քառորդը վճարէ: Այսպէս, մեր յիշած օրինակին մէջ, պէտք է որ մէն մի բաժնետէր վճարած ըլլայ գէթ 50 զըշ, իր ստորագրած մէն մի բաժնեթուղթին համար: Կը տեսնուի թէ ընկերութիւնը չի կրնար կազմուիլ մինչեւ որ իր դրամագլխին գէթ մէկ քառորդը չ'մտնէ անուակը, եւ մնացեալին համար ալ բաժնետէրք յանձնառու չ'ըլլան վճարելի հարկին: Ստորագրումն ու վճարումը կ'արձանագրուին ներկայացուցիչ ընկերին կողմէ, նօտարութենէ վաւերացուած պայմանագրի մը մէջ, որուն պէտք է կցել ստորագրողներուն ցուցակը, իրենց վճարումներով եւ ընկերութեան պայմանագրին պատճէնը, եթէ նօտարի մը կողմէ վաւերացուած է, կամ մէկ օրինակը, եթէ վաւերացուած չէ: Ընկերութեան պայմանագիրն երկու օրինակ միայն կ'ըլլայ, ընկերներուն թիւն որչափի ալ հասնի, մին կը մնայ կեդրոնատեղին եւ միւսը՝ ընկերութեան ներկայացուցչին քով: Ընկերային ամբողջ դրամագլխին ստորագրումն եւ մէկ քառորդին վճարումը պահանջող տրամագրութեան նպատակն է արգիլել որ ընկերութիւնն իրր գոյութիւն ունեցող մարմին մը չ'ներկայանայ ուրիշներուն, երբ տակաւին իր դրամագլուխը կազմուած չէ: Եթէ այս պայմանները չ'կատարուին, օրէնքին առջեւ գոյութիւն չունի այդ ընկերութիւնը:

Թիւ եւ ձեւ բաժնեթուղթերու. — Ստորագրուողներուն պատասխանատուութիւնը. — Եղան ընկերութիւններ որք չատ փոքր գումարներով բաժնեթուղթեր հանեցին հրապարակ: Ասոր մէջ մեծ անպատեհութիւն մը կար: Փոքր դրամատէրներ, որք տգէտ ու միամիտ դասակարգին կը պատկանին, կը փորձուէին իրենց դրամը շահագործել, անպարկեշտ ձեռնարկուի մը ստութիւններէն և հըրապուրանքներէն խաբուելով: Այդ կարգի բաժնեթուղթերը խաբէութեան դիւրին միջոց մը պիտի ըլլային: Այսօր, բաժնեթուղթի մը արժէքը 100 ֆրանքէն պակաս չի կրնար ըլլալ երբ ընկերային դրամագլուխն 200,000 ֆրանքէն վեր չէ, եւ 500 ֆր.՝ եթէ անկէ վեր է: Բաժնեթուղթին մէկ քառորդը վճարուելէն ետք կրնայ առուծախ ըլլալ անոր վրայ: Բայց միայն իբր անուանական բաժնեթուղթ, և ընկերութեան տոմարներուն մէջ արձանագրուելու պայմանաւ: Սկզբամբ բաժնեթուղթն անուանական կը մնայ, մինչեւ որ արժէքն ամբողջովին հատուցուի: Երբ բաժնե-

թուղթի մը կէսը վճարուած ըլլայ, բաժնետէարց Ընդհանուր Ժողովին որոշմամբ կրնայ վերածուիլ au porteur բաժնեթուղթի, որ այն ատեն կրնայ փոխանցուիլ ձեռքէ ձեռք: Ամէն պարագայի մէջ, բաժնեթուղթն au porteur ըլլայ կամ անուանական մնայ մինչեւ ամբողջական հատուցումը, առաջին ստորագրողը, որ իր բաժնեթուղթը ծախած է, մինչեւ երկու տարի պարտաւոր է վճարել իր ստորագրած բաժնեթուղթին կամ բաժնեթուղթերուն արժէքը:

Բաժիններու նշանակումը. — Բաժնեթուղթով կազմուած քոմանտիդ ընկերութիւններու մէջ յաճախ դիտուած զեղծում մ'է հիմնադիրներուն կողմէ անհամեմատ բարձր արժէք մը դնել այն բաժիններուն որք հնչուն դրամ չեն, այլ, զորօրինակ, կարասի, հրնարչի արտօնագիր եւայլն: Այս պարագան նախատեսուած ու կարգադրուած է այսպէս. — Երբ ընկեր մը ո'չ թէ դրամ, այլ ուրիշ բան մը կը բերէ ընկերութեան շիրք իր բաժինը, բաժնետէարց Ընդհանուր Ժողովը կը գումարուի եւ քննիչներ կ'անուանէ այդ ապրանքին կամ կարասիին արժէքը քննելու համար: Գրննիչները կրնան ընտրուիլ բաժնետէրերէն կամ ընկերութենէն դուրս մարդոցմէ: Երբ քննութեան գործն աւարտի, Ընդհանուր Ժողովն երկրորդ անգամ կը գումարուի քննիչներուն տեղեկագիրը լսելու եւ իր որոշումը տալու համար: Որոշումը կը տրուին մեծամասնութեամբ: Այն ընկերը, որու բաժինին վրայ է խնդիրը, ձայն չունի:

Հսկող մարմին: — Քուէքդիվ եւ պարզ քոմանտիդ ընկերութիւններու մէջ, ուր ընկերներուն թիւը սահմանափակ է, եւ իւրաքանչիւրին շահը բաղդատաբար մեծ, Տնօրէնին գործերուն վրայ հսկողութիւնը բնականաբար կը կատարուի մէն մի ընկերակցի կողմէ: Բաժնեթուղթով կազմուած քոմանտիդ ընկերութիւններու մէջ, որոց անդամները կրնան բազմաթիւ ըլլալ եւ իւրաքանչիւրը շահու նուազ կարեւոր բաժին մը ներկայացնել, անհատական քօնդքօլն ապարդիւն եւ նոյն իսկ անկարելի կ'ըլլայ: Մէկ, երկու կամ երեք բաժնեթուղթի տէրը չի կրնար ազդեցութիւն մը ունենալ Տնօրէնին վրայ: Ասկէ ծագում առած է հսկող մարմինը, որուն պաշտօնն է Տնօրէնին գործերն հակակշռել, հասարակաց շահուն համար: Ուրեմն, այս կարգի ամէն ընկերութեան մէջ, պէտք է կազմուի հսկող մարմին մը որ առնուազն երեք բաժնետէրերէ կը բաղկանայ եւ բաժնետէարց Ընդհանուր Ժողովին կողմէ կ'ընտրուի, ընկերութեան վերջնական կազմութենէն անմիջապէս ետքը: Ընկերութիւնն օրինական գոյութենէն զուրկ կը նկատուի երբ չունենայ իր հսկող մարմինը, որու պայմանաժամն է մէկ տարի եւ կրնայ վերընտրուիլ:

ՊԱՆՔԱՅԻ ՀԱՇԻՒՆԵՐ

ՕՐ ՀԱՇԻՒՆ ԼԻՕՆԻ Ք. ՊԱՆՔԱՅԻՆ

(Լ ՈՒ Ծ ՈՒ Մ)

10 Մայիս		Բուլլ	Ֆրանք
ԲՕՆԴՈՒԱՌ ՌԻԻՍ	Մեր հաշիւը	12911 25	34454 70
ՓՈՒԱՆԱԿԱԳԻՐԻՆ			
Բուլլ. Արժէք 16 Մայիս, փոխանակագին 3 ամիս, 264 Փր.			
20			
ՓՈՒԱՆԱԿԱԳԻՐ			
ԲՕՆԴՈՒԱՌ ՌԻԻՍ	Իրենց հաշիւը		17973 10
Ֆրանք: Արժէք 24 Մայիս			
25			
ՍԵՏՈՒԿ	802		
ԲՕՆԴՈՒԱՌ ՌԻԻՍ,	Մեր հաշիւը	300	801
Չէք, Պալմոնի հրաման. բուլլ. արժէք			
1 Յունիս, ի տես փոխանակագին 267			80
ՏՈԿՈՍ ԵՒ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՂՁԻՔԻ			
Յանձնար. 1/10 %			
ԴՐՈՇՄԻ			20
Դրոշմ, Պալմոնի չէքին			
31			
ՊԵՍՍՈՆ	13338,65		
ԲՕՆԴՈՒԱՌ ՌԻԻՍ	Մեր հաշիւը	5000	13332
ՎՃ. Զինօքի բալլ. արժէք 5 Յունիս			
Փոխ. գին 3 ամիս, 264			
ՏՈԿՈՍ ԵՒ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՂՁԻՔԻ			
Յնճն. 1/20 %			665
10 Յունիս			
ԲՕՆԴՈՒԱՌ ՌԻԻՍ	Իրենց հաշիւը		
ՍԵՏՈՒԿԻՆ			500
ՎՃ. Տիմսքիի Փր. արժէք 9 Յունիս			

		Բուսկ	Ֆրանք
11			
ՔՕՆԴՈՒԱՌ ՌԻԻՍ	Իրենց հաշիւը		
ՌԻԻՖԷԻ	Մեր հաշիւը		12610
Մեր չէքը Բ.ի հրմին, Ռիւֆէի վրայ,			
£ 500: Փոխ. գին 25,22, արժ. 10 Յունիս			
12			
ՔՕՆԴՈՒԱՌ ՌԻԻՍ	Մեր հաշիւը	33000	
ՓՈՒԱՆԱԿԱԳՐԻ			87918
Մեր վճ. բալ. միջին արժէք 14 Յունիս			
Փոխ.գին 3 ամիս 265			
20			
ՍԱԼԼԻԷ			
ՔՕՆԴՈՒԱՌ ՌԻԻՍ	Մեր հաշիւը		
Վճ. Օտեսայէ, Ի հաշիւ Սալլիէի, բուսկ.	9000	24088	50
արժէք 15 Յունիս, Փոխ.գին 3 ամիս 265			
20			
ՓՈՒԱՆԱԿԱԳՐԻ	27300		
ՔՕՆԴՈՒԱՌ ՌԻԻՍ	Մեր հաշիւը	10130	85
Յնձնմ. Օտեսա, բալ. արժէք 15 Յունիս			27247 25
Փոխ.գին 3 ամիս, 37 եւ 2 %			
ՏՈԿՈՍ ԵՒ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՂՁԷՔԻ			52 75
Չեղչ 20%			
20			
ՍՆՏՈՒԿ			
ՔՕՆԴՈՒԱՌ ՌԻԻՍ	Իրենց հաշիւը		
Վաճառում 20 պարտաթուղթի, ֆր. արժ.			10386 45
21 Յունիս			
20			
ՔՕՆԴՈՒԱՌ ՌԻԻՍ	Իրենց հաշիւը		
ՓՈՒԱՆԱԿԱԳՐԻ			4806 85
Մեր յնձնմ. բալ. 1800, ֆր. արժէք			
19 Յունիս			
30			
ՏՈԿՈՍ ԵՒ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՂՁԷՔԻ			
ՕՏԵՍԱՅԻ	Մեր հաշիւը	35 17	94 10
Յնձնր. 1/20% Օտեսայի մէջ եղած գոր-			
ծողութեանց համար, բալ. 70342,10			
30			
ՕՏԵՍԱ	Իրենց հաշիւը		
ՏՈԿՈՍ ԵՒ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՂՁԷՔԻ			23 15
Յնձնր. 1/20 % Լիօնի մէջ եղած գործո-			
ղութեանց համար ֆր. 46,276. 40			

ՀԱՇԻԻՆԵՐ

ՊՕՐՏԸՐՕ Ի ԼԻՕՆ

10 Մայիս (3 ամիս = 10 Օգոստ)

Րպ.	9000	Օտեսա	20	ՅուՆիս	51	51
	4000	»	30	»	41	18,23
	<u>13000</u>					<u>69,23</u>

69,23 տոկոս 4 %

18,20 ուսու. դրոշմ

51,03

Րպ. 13051.03 փոխ. գին 264 = Ֆր. 34454,70

* * *

Պորսքո յՕսեսա, Մայիս 15ին (Նոյն)

Րպ.	9000	Օտեսա	20	ՅուՆիս	36	54
	4000	»	30	»	46	30,66
	<u>13000</u>					<u>84,66</u>

70,55 գեղչ 5 %

18,20 ուսու. դրոշմ

88,75

Րպ. 12911,25 նէթո, արժէք 16 Մայիս

* * *

Պորսքո Ի Լիօն, Մայիս 20ին

Ֆր.	12000	Բարիդ	31	Մայիս	11	22
	6000	Լիօն	10	ՅուՆիս	21	21
	<u>18000</u>					<u>43</u>

17,90 գեղչ 2 1/2 %

9 Ֆրանս. դրոշմ

26,90

Ֆր. 17973,10 նէթո արժէք 21 Մայիս

* * *

Հաշիւ միջին արժեքի

Բպ.	12 ժողով	25 Յունիս	0	0
	6 »	12 Յունիս	17	102
	15 »	31 »	36	540
	33			642

$$\text{Միջին վճարօր} = \frac{642}{33} = 19 \text{ օր} = 14 \text{ Յունիս}$$

Դիտողութիւն. -- Միջին վճարօրի հաշիւներուն մէջ աւելորդ է զերօններով զբաղիլ երբ դրամագլուխներն հաւասար թուով զերօններ ունին:

* * *

Պօրքոյ յօշուս

12 Յունիս (3 ամիս=12 Սեպտ.)

Բպ.	33000 ժողով	14 Յունիս	60	330
		220 տոկոս	4 %	
		43,40 Ռուս. դրոշմ		
	176,60			

$$\text{Քր.} \quad \underline{\underline{33176,60}} \quad \text{Փոխ. գին} \quad 265 = \text{Քր.} \quad 87,918$$

* * *

Պօրքոյ յօշուս

16 Յունիս (3 ամիս=16 Սեպտ.)

Ֆր.	9000 Բարիզ	30 Յունիս	78	117
	4500 Լիօն	10 Յունիս	68	51
	3800 Մարսիլիա	20 »	58	36,74
	10000 »	31 »	47	78,33
	27300			283,07

94,35 տոկոս 2 % (զեղչ)

13,65 Ֆր. դրոշմ 0,05 %

80,70

$$\underline{\underline{27380,70}} \quad \text{Փոխ. գին} \quad 3 \text{ ամիս} \quad 37 = \text{Բպ.} \quad 10130,85$$

* * *

Պօրսքո ի Լիօն

20 Յունիս

Ֆր.	9000 Յունիս	30	10	15
	4500 Յունիս	10	20	15
	3800 »	20	30	19
	10000 »	31	41	68,33
	27300	39,10	զեղչ 2%	117,33
		13,65	Ֆր. դրոշմ.	
	52,75			
	27247,25			

* * *

Պօրսքո 10 պարտաւորութեան , Լիօնի մէջ ծախուած ,
ի հաշիւ Օսեսայի

20 պարտաւորութ. ուս 4 %	ոսկի	104	10400
Միջնորդ. 1/8 %		13	
Տուրք 0,05 %		0.55	13,55
			10386,45

Դիտողութիւն. — Ռուսական պարտաւորութ. 500 Ֆր. են :
104ը կը համեմատի անուանական 100ի Ուրեմն , մէն մի պարտա-
ւորութ կ'արժէ $104 \times 5 = 520$:

* * *

Պօրսքո ի Լիօն

20 Յունիս (3 ամիս=20 Սեպտ.)

Բպ. 1800	Օտեսա	30 Յունիս	82	16,40
	16,40	տոկոս	4 %	
	2,50	Ռուս. դրոշմ		
	13,90			
	1813,90	Փոխ. գին 3 ամիս	265	= Ֆր. 4806,85

* * *

Գործողութիւնք ի Լիօն, ի հաշիւ Օսեսայի


20	Մայիս	17973,10
10	Յունիս	500
11	»	12610
20	»	10386,45
20	»	4806,85
		46276,40

Յանձնարարողչէք $1/20 \%$ = Փր. 23,15


* * *

Գործողութիւնք յՕսեսա, ի հաշիւ Լիօնի

10	Մայիս	Բպլ.	12941,25
25	»		300
31	»		5000
12	Յունիս		33000
20	»		9000
20	»		10130,85
			70342,10

Յանձն. $1/20 \%$ = Բպլ. 35,17Բպլ. 35,17 ի տես փոխ. գին $267 \frac{1}{2}$ = Փր. 94,10:

Առեւտրական Նամակներ



Գ Լ Ո Ւ Խ Բ.

Մ Ա Տ Ո Ւ Ց Ո Ւ Մ.

Այն նամակը, որով կ'ուզենք մեր ծառայութիւնը մատուցանել առեւտրական սան մը, պէտք է պարունակէ բարեկամ անձերու անունները: Ասիկա յարաբերութեան մտնելու լաւագոյն միջոցն է, վասն զի ասով յարգանքի արժայատւութիւն մը քրտն կ'ըլլանք, խնայելով այն հոգը զոր վանառասան տէր յանձն պիտի առնէ մեր վրայ

սեղեկութիւն տալու կարող մարդիկ փնտռելով: Այսու հանդերձ, ընդունուած է որ վաճառականք, առանց ո եւ է անձի անուն յիշելու կամ առանց ո եւ է պատրուակի, կրնան իրենց ծառայութիւնը մատուցանել այնպիսի տուներու, որոնք ի լոյ միայն ծանօթ են իրենց: Այս պարագային, քանի մը փառաբանական խօսքերէ ետք, իրենց ապրանքին տեսակը կը ծանօթացնեն եւ յանձնարարութիւն կը խնդրեն⁽¹⁾: Գալով այս նամակներուն ձեւին, պիտի տեսնուի որ շատ կը նմանին շրջաբերականներու, որոնցմէ սակայն կը տարբերին սա կէտին մէջ որ ձեռագիր են եւ մէկ վաճառատան միայն կը դրկուին: Ուստի նամակագիրը կրնայ իր յարգանքը, անձնութիւններուն ու փութկոտութիւնը յայտնել ուզած բառերով, վասն զի մէկ հոգիի միայն ուղղուիլը կրնայ աւելի արժեք մը տալ անոնց: Այս նամակներուն խմբագրութիւնը շատ փափուկ եւ դժուարին գործ է, վասնզի փութկոտութիւն ցոյց տալով հանդերձ, պէտք է արժանապատուութիւնը պահել: Չափազանց գովեստէ կամ չափազանց ստիպարեանէ զուտանալու է: Պէտք է յիշել վնասման եղանակը, վարկի պայմանաժամը եւ վերջապէս բոլոր պայմանները: Ի մի բան. առաջագրուած նպատակին հասնելու համար, լուսագոյն է վաճառականին շահն ի նկատ առնել եւ նպատակաւոր առաջարկութիւններ ընել, որպէսզի անիկա բնականօրէն պատրաստուի արդիւնաւոր պատասխան մը տալ:

Messieurs,


Nous avons l'avantage de connaître déjà depuis quelque temps votre maison honorable et comme le genre des affaires que nous traitons pourrait peut-être conduire à des rapports suivis et profitables, nous prenons la liberté de vous entretenir de la situation actuelle de notre marché, en vous désignant les articles qui nous paraissent présenter aujourd'hui le plus d'avantage. La diminution considérable qu'éprouve le bois de

(1) Աւելորդ չէ ըսել որ այսպէս անհատական նամակներով եղած մատուցումները շրջաբերականներէն շատ մեծ տարբերութիւն ունին, եւ ապրանք ծախելու յուրջ առաջարկութիւն մը կը նկատուին, այնպէս որ եթէ վաճառատան մը տէրը անմիջապէս ուզէ գնել այն ապրանքներէն, առաջարկ ընողը պարտաւոր կ'ըլլայ յանձնել, եւ չի կրնար առարկել թէ ուրիշին ծախած է: Ուրեմն, երկարատեւ կապուած չմնալու համար, պէտք է նամակին մէջ պայման գնել որ առաջարկուած ապրանքը պիտի յանձնուի այն ատեն միայն երբ ուզուած միջոցին ծախուած չէ:

réglisse vient fort à propos pour l'approvisionnement du printemps ; nous avons acheté aujourd'hui la première qualité, très sec et gros, à fr. 45, et d'autre bonne marchandise un peu menue, à fr. 44.

Nous référant à notre prix-courant inclus, et désirant que vous y trouviez matière à alimenter nos rapports, nous vous prions d'agréer l'assurance de nos très sincères salutations.

...



Monsieur,

Sous les auspices de nos amis communs, Messieurs Vautiers frères, j'ai l'honneur de vous faire l'offre de mes services.

Ayant le plus vif désir d'entrer en relation avec votre estimable maison, je vous ferai, Monsieur, toutes les concessions compatibles avec mes intérêts pour vous déterminer à m'accorder la préférence, ou du moins une partie de vos ordres.

En attendant une réponse favorable, j'ai l'honneur de vous saluer sincèrement.



Sir,

Under the auspices of our mutual friends Messrs. Vautier Brothers, I take the liberty of making you an offer of my services.

Having the greatest desire to become connected with your honourable house, I should be happy to make every sacrifice compatible with my interest, to induce you to grant me, if not the preference, at least a share of your orders.

Awaiting a favourable reply, I have the honour, Gentlman, to subscribe myself,

Yours very respectfully

* * *



Պ Ա Ն Ք Ա

Ե.

ՇՐՋԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՊԱՆՔԱ

Պանքտոմսը պանքայի մը պատրաստ դրամը ներկայացնող գումարին կազմակերպուած շրջաբերութիւնն է, կամ խոստում մը՝ տեսօրին վճարելու համար ներկայացնողին: Արդէն պանքտոմսն ասով կը տարբերի միւս առեւտրական թուղթերէն: Եւ սա առաւելութիւնն ալ ունի որ դրամի շրջաբերութիւնը կը խնայէ և կը դիւրացնէ: Պանքտոմսը շրջաբերութեան հանող պանքային համար աւանդ մ'է որու փոխարէնը կրնայ պահանջուիլ ամէն վայրկեան: Ի տես վճարելի սովորական աւանդը կը պահանջուի երբ աւանդատուն պէտք ունենայ անոր, կամ երբ պանքէտին հատուցանելու կարողութեան վրայ կասկած յղանայ եւ կամ երբ դրամը գործածելու աւելի շահաւոր տեղ մը գտնէ: Ընդհակառակը, պանքտոմսը, իբր ընդունուած դրամ շրջաբերելով, հարկ չկայ դրամի հետ փոխանակելու: Պանքտոմսը մասնաւոր պարագաներու մէջ միայն դրամի կը վերածուի, այսինքն երբ վաճառականը պայման դրած ըլլայ հնչուն դրամով ընել իր վճարումը: Կարգ մը երկիրներու մէջ, պանքտոմս շրջաբերութեան հանելու գործը սահմանափակուած կամ առանձնաշնորհուած է: Ֆրանսայի, Անգլիոյ եւ Գերմանիոյ պանքաներուն վրայ տրուելիք տեղեկութիւններէն պիտի տեսնուի որ այս բարեշրջումին պատմական պատճառները գրէթէ նոյն են ամէն երկրի մէջ: Պատմութիւնը կը ցուցնէ որ առեւտրական, սեղանաւորական ու ճարտարական բոլոր առանձնաշնորհումներն եղած են ինչ ինչ պէտքերու ազդեցութեան տակ: Կառավարութիւնք այդ կերպով դիւրին միջոց մը կը գտնէին դրամ ճարելու: Հետեւապէս, կարգ մը պանքաներու նախնական դրամագլուխներն եղած են պետական արժեթուղթեր որք սեղանաւորական կամ վաճառականական խմբակներու կողմէ կառավարութիւններու փոխ տրուած գումարները կը ներկայացընէին: Երաշխաւորութիւններն իրական էին երբեմն: Վկայ՝ Քորսիքա կղզիին սեփականութեան իրաւունքը որ ԺԾ. դարու սկիզբները տրուեցաւ Ճենովայի պանքային, իբր ապահովութիւն: Անգլիոյ պանքային ծագումն ալ այսպէս է, եւ նաբոլէոն Ա., Պանք

տը ֆրանսը հիմնելով, կ'ուզէր ստեղծել ամէն բանէ առաջ պետութեան շահերուն անձնուէր պանքա մը: Պանքտոմ հանելու առանձնաշնորհումն ունեցող պանքաները շատ կարելորդ դեր մը կը կատարեն, վասն զի պանքտոմնի շնորհիւ կը համախմբեն մետաղական մթերք մը որ մեծ ծառայութիւն կը մատուցանէ ելմտական տագնապներու ատեն:

2.

ՇԱՀԱԴԻՏՈՒԹԵԱՆ ՊԱՆԲԱ

Այս կարգի պանքաներու գլխաւոր գործառնութիւններն են արժէթղթերու գնում եւ վաճառում, որք ըստ երեւոյթին չեն տարբերիր ամէն տեսակ ապրանքներու գնումէն ու վաճառումէն, բայց, իրականութեան մէջ, այս գործառնութիւնք հիմ չունին: Արժէթուղթ մը, որ ճարտարական ձեռնարկութեան մը վրայ պահանջ մը կը ներկայացնէ, թէեւ ռաբուն արժեք կ'ըսուի, բայց կերպով մը անշարժ է, վասն զի իր շրջաբերութիւնը չերաշխաւորէր ներկայացուած առարկային շրջաբերութիւնը: Ուրեմն, այդ առարկան հաստատուն դրամագլուխ մ'է, մինչ առեւտրական գործառնութեան մը առարկան շարժուն դրամագլուխ մ'է: Արդ, հաստատուն դրամագլուխները, արժէքի փոփոխութեան մասին, շատ մը անպատեհութիւններ ունին: Ասկէ առաջ կուգայ այս կարգի գործողութիւններու դիպուածական հանգամանքը: Ասոնք պարզապէս շահադիտական գործողութիւններ են քանի որ հաւանականութիւն կայ անակնկալի մը հանդիպելու: Շահադիտական պանքաները մենաշնորհներու կամ ուրիշ երաշխաւորութիւններու վրայ փոխատուութիւններ ալ կ'ընեն եւ կառավարութեանց կամ ճարտարական ընկերութեանց հաշուոյն արժէթուղթեր կը հանեն հրապարակ: Բայց այս պարագային, յանձնարարողչէքով մը գոհ չեն ըլլար միշտ, այլ շահու աղբիւր մը կը փնտռեն արժէթուղթերու գիններուն բարձրացման կամ անկման մէջ: Եթէ առեւտրական պանքաներն իրենց աւանդուած դրամագլուխները կը շահագործեն առեւտրական ընթացիկ ու ապահով գործերու մէջ, շահադիտութեան պանքաները չեն կրնար այսպիսի դրամագլուխ մը գտնել, վասն զի վտանգն աւելի մեծ է հոն: Հետեւապէս, հիմնադիրներն իրենք կը հայթայթեն պէտք եղած դրամագլուխը:

ԱՆԳԼԻՍ 85

Յուլյակ 1898ին Անգլիա ներածուած գաղթային եւ

օտար վաճառքներու

Հիւսիսեանիւք	1000	Սոյն լին
Խամ բամբակ		34332
Բամբակեղէն		4468
Խամ բուրդ		25742
Բրդեղէն		9914
Խամ մետաքս եւ մետաքսեղէն		18820
Կանեփ		2384

Բուսական արտադրութիւններ

Ճորեն, ալիւր եւայլն	62909
Ճիւղի արտադրութիւնք	1443
Շաքար	18300
Բրինձ	2066
Գինեւանձոր	1914
Թաթիկ բանջարեղէն	1081
Բուսական ուրիշ արտադրութիւններ	950

Կենդանական արտադրութիւններ

Ողջ կենդանի	10486
Խոզի ճարպ	10322
Կով	6189
Ոչխար	4902
Ժամպոն	3895
Ձուկ	3502
Պահածոյ միս	2615
Խոզ	1485
Ուրիշ կենդանական արտադրութիւններ	1209

Բիւիական ճարտարարուեստ

Խէժ եւ ուտին	11522
Ձիթաբեր հունտեր	6740
Իւղ	4365
Ներկ	3261
Պարարտացուցիչ նիւթեր	2025
Դեղ	1189
Վէրնի	1124
Ուրիշ նիւթեր	2716

Կաթնային արտադրութիւնք

Կարագ	15962
Պանիր	4986
Հաւկիթ	4457
Պահածոյ կաթ	1436
Թարմ կաթ	11

Մեսաղ

Բանուած երկաթ	7321
Խամ եւ բանուած պղինձ	4260
Արոյր	2535
Զինկո	1922
Երկաթ, ձող եւայլն	1416
Անագ	1393
Ուրիշ մետաղներ	1474

Ըմպելի

Թէյ	10336
Խաչուէ	3590
Քաքաօ	1971

Կենդանական նիւթեր

Մորթ	2905
Կաշի	7778
Կաշեղէն	3014

Հանածոյ

Երկաթի	4034
Պղնձի	2614
Արծաթի	1146

Պտուղ

Թարմ պտուղներ	8199
Կորնթոսի չամիչ	1083

Հեղուկներ

Գինի	6575
Օղի	1149
Գարեջուր	117

Նորութիւնք

Փետուր	1440
Մուշտակ	4881
Ժապաւէն	1430

ԱՆԳԼԻՍ 87

Զանազանք

Փայտ	23473
Քառույտ	6784
Քարիւղ	3774
Միսախոտ	3290
Ժամացոյց	1868
Երաժշտական գործիներ	1221
Զի	1146
Խաղալիք	1110
Թուղթ	3530

Յուլի 1898ին Անգլիայի արժանուած գլխաւոր վաճառքներու

Հիւսուածոյ	1000 Սդերին
Զգեստ	4696
Մանած	8923
Վուշ	4393
Մետաքսեղէն	1862
Բրդեղէն	2803

Մետաղ

Պղինձ	2797
Երկաթ	16000
Պողպատ	4944
Արոյր	545
Շոգեշարժ եւ այլ մեքենայ	18000
Բանուած մետաղներ	603
Հեռագրական թելեր	985
Անագ	395
Զինկո	157
Մանր երկաթեղէնք	1987
Գործիքներ եւն	1345

Թուղթ եւ ռազագրութիւն

Գիրք	1337
Թուղթ	14317
Թղթեղէն	988

Քիմիական հաշվարկներ

Պարարտացուցիչ	2175
Պեղ	4104
Օճառ	829
Իւղ	1201
Սնունդ	
Ռոքեն, ալիւր	753
Շաքար	586
Պատելիք	723
Սնուչեղէն	1343
Զուկ	2588
Հմայելի	
Գարեջուր	1623
Ոգեղից ամպերի	1952
Զանազանք	
Անպտանք	4104
Ածուխ	18135
Քառուչու	1329
Կաշի	3324
Մարթ	941
Մամազոծ կտաւ	1000
Ուրիշ արտածութիւնք	9892

ԱՆԳԱՄԱԶՆՈՒԹԻՒՆ. — Դիակի մը զանազան մասերը կտրատելու եւ գործնական զննութիւններ կատարելու գործը ծագում առած է 200 տարիէ ի վեր, այսինքն այն ժամանակէն ժրք բժիշկներն իրաւունք ունեցան անդամահատել ո՛չ միայն կախաղան հանուողներու դիակները, այլ նաեւ հիւանդանոցներու մէջ մեռած այն անձերը, որոնց ընտանիքն երեւած ելած չէ։ Յրանսայի մէջ ընկերութիւն մը կայ որ իր ծախքով վըր թաղէ այն մեռելները, որոց ընտանիքներն երեւան ելած չեն։ Անկարելի է ճանչնալ մեր բոլոր հիւանդութիւններն եւ անոնց դարմանները գտնել, առանց մօտէն ուսումնասիրելու ժարգոց մարմնոյն զանազան մասերն եւ այն եղանակն որով կը պաշտօնավարեն անոնք։ Մարդկային մարմնոց արեւաստական մոզներ ալ կը պատրաստուին զանազան նիւթերով, եւ անոնց մանրանկար օրինակներն հանուած են որոց վրայ ընդարձակ վաճառականութիւն կ'ըլլայ։ մանաւանդ ի Գերմանիա։ Այս նպատակաւ գործածուած մեքրամոմին

Այժմ կը խառնեն խաբի հալած ճարպ, որ կակուղութիւն մը կու
 տայ, և քեզնկնախէժ, որ առկուն կ'ընէ կաղապարները: Բարեկի
 մէջ, Դրամոնի գործարանը տիեզերական համբաւ ունի իր շինած
 կաղապարներուն գերեցելութեան և զիտական ճշտութեան հա-
 մար: Գլխին գործարանները, ղնդերները, ջիգերը, դոպարանքի
 գործարանները ևն. կաղապարաւած են նոյն քաղ կմախքին յիշատակ:
 Այս գործարանին պրտադրութիւնք շատ ազդեալ են: Արիւնակի հա-
 մար, ղոպարանքի գործարանները կ'արժեն 50 և 500 ֆր., պր-
 տան շրջանը ցոյց տաւող գործարանները՝ 400 ֆր., և մարդկա-
 յին մարմնոյ մը բոլոր գործարանները՝ մինչեւ 3500 ֆր.: Մ.
 Դրամոն նոր քաղադրութիւն մ'ալ գտած է: Այդ քաղադրու-
 թիւնով պարարատուած գործարանները թէ՛ առաձգական միջ-
 քան և թէ տարբութենէ ու խոնարութենէ չեն աւրուիր: Կա-
 տարեալ ճշտութեամբ կը ներգիւյսացնեն գործարաններու ձեւն ու
 ծաւալը, իրարու հետ ունեցած յարաբերութիւնները, գոյնները
 և վերջապէս անոնց բոլոր տեսանկի յատկութիւնները: Միայն
 թէ մեղրամոմը ինչ ինչ անպատեհութիւններ ունի մանկավար-
 ժական և ստեղծարարական տեսակէտերով: Նախ, այս նիւթով պատ-
 րաստուած գործարանները ասպակիներու տակէ միայն կրնան
 դիտուիլ: Կարելի չէ չօջախել գանձի շառանց անպատեհութեան
 ինքնաբերական: Թեոյն քննութիւն կատարողը չի կրնար գործա-
 րան մը վերջնէ, անոր տակ գտնուած ուրիշ գործարան մը տեսե-
 լնալ համար: Վերջապէս, շատ ալ չեն դիմանար, մանաւանդ
 ապք երկրներէրու մէջ, Կերպով մը քացառութիւն կը համարուին
 Դրամոնի գործարանին արտադրութիւնները, որք դիմացկեան են
 և կրնան օճառով լուսցոսիլ: Մեղրամոմէն ևտքը, քաղապէս
 գործածուեցան, գաճն ու կաւը, կենդանիներու անբնական գործա-
 րանները ներգիւյսացնելու համար: Այս նիւթերով պատրաստուած
 նիւթ, ստեղծարարական տեսակէտով, ինչ ինչ առաւելութիւններ
 ունին մեղրամոմին վերայ: Նախ, շատ աւելի են, և յետոյ միեւ-
 ընդին գործարանը կրնայ օւրիշ գործարանի մը վերածուիլ կաղա-
 պարներու միջոցաւ: Սակայն դիւրաւ կը կոտրին և չեն կրնար
 ներգիւյսացնել այն նիւթին մանրամասնութիւնները, որք այնքան
 դաւ կատարուին մեղրամոմի միջոցաւ: Ահա ասոր համար է որ
 անարդուն և անասունին դնդերային դրութիւնը ներկայացնելու
 համար միայն մը գործածուին անոնք, այսինքն չիմելու համար
 մերթազանց պատկերներ որք նկարիչներու և քանդակագործ-
 ներու միայն օգտակար կրնան ըլլալ: Մեղրամոմէ, գաճէ կամ
 կաւէ շինուած այս բոլոր գործարաններ միեւնոյն անպատեհու-

Թիւնն ունին, այսինքն գործարանի մը միայն մէկ երեսը ցոյց կու տան, որով ուսանողը չի կրնար օգտուիլ այնպէս ինչպէս ճշմարիտ անդամահատութեան մը ատեն, այսինքն չի կրնար գործարաններն իրարմէ բաժնել, տակինը տեսնելու համար վրայի գործարանը վերցնել եւն.։ Ասոնք կարեւոր թերութիւններ են որոց պատճառաւ այդ նիւթերով պատրաստուած գործարանները գեղարուեստական առարկաներ կամ թանգարաններու զարդեր են աւելի քան թէ գննական առարկաներ։ 16րդ. դարուն, Վալէնօ Դապար անուն սպանիացի բժիշկ մը առաջին գաղափարն ունեցաւ անշատ մասեր իրարու միացնելու։ Այս ճամբուն մէջ մեծ յառաջդիմութիւն ըրաւ, 19րդ դարու սկիզբը, Քանցի բժիշկ մը, Տոքթ. Ամէլին, որ թանձրաքարտ գործածեց։ Քանի բժշկական վարժարանը մինչեւ ցարդ պահած է իր նախկին բրոֆէսէօրին նախնական փորձերը, Բայց այս տեսակէտով ամէնէն գործնական գիտը կը պարտինք ուրիշ նորմանտացի բժշկի մը, տոքթ. Օգուի (1822), որուն շինած անդկախառն թեթեւ խմորը կը թափեն մետաղեայ կաղապարներու մէջ։ Այդ խմորը, կարծրանալով, դիմացկունութիւն մը կ'ստանայ, առաձգական մնալով հանդերձ։ Գործարաններն իրարու հետ կը կապուին երկաթեայ ձողերով, այնպէս որ կարելի է իւրաքանչիւր մասը ամենայն դիւրութեամբ հանել եւ նորէն տեղը դնել։ Այս տեսակ հատուածներ շինող գործարանը կը գտնուի ի Սէնդ-Օպէն-տիէքովիլ (Ֆրանսա), ուր 50-60 գործաւորներ կ'աշխատին եւ աշխարհի ամէն անկիւնները կը զրկեն իրենց արտադրութիւնները։ Ասոնք ամէն բարեխառնութեան կը յարմարին, դիմացկուն են, բայց սուղ։ Արհեստական ամբողջ մարդ մը, որ 130 կտորներէ կը բաղկանայ եւ 2000 մանր մասեր ունի, հասակին համեմատ կ'արժէ 1500էն 3000 Ֆր.։ Ամբողջ ձի մը, որ 97 կտորէ կը բաղկանայ, կ'արժէ 4000 Ֆր.։ Ֆրանսայի մէջ վերջերս շատ շահեկան փորձեր եղան շինելու համար այնպիսի հատուածներ, որք ո'չ միայն գործարաններու բնական գոյնը, ձեւը եւ դիրքը ներկայացնեն, այլ նաեւ իրական մեծութիւնը։ Այսպէս, Ֆրանսացի տոքթ. Բօլիէի շինած ուղեղը, մանաւանդ ստամոքսը, բնականին հաւատարիմ ընդօրինակութիւնն է։ Շինուած է մածիտէ (gélatine) եւ ուրիշ նիւթէ խմորով մը։ Գերմանիոյ եւ Աւստրիոյ մէջ ընդարձակ վաճառականութիւն կ'ըլլայ մարդկային մարմնոյ արհեստական հատուածներու վրայ։ Ֆրանսայի մէջ աւելի ընդարձակ է անասնոց արհեստական գործարաններու առեւտուրը։ Ասոնց նախնական նիւթերը կը կազմեն թուղթ, մածիտ, մեղրամոմ եւ դաճ։

ԱՆԴԻԼԵԱՆՔ 91

ԱՆԴԻԼԵԱՆՔ. — Կղզիներ՝ Ադրանտեան ովկէանոսին մէջ, Մէքսիկայի ծոցին արեւելեան կողմը: Կը բաժնուին երկու խումբերու, 1. Մեծ Անդիլեանք, որ կը պարունակէ Բուպա, Բորդո-Ռիքո, Ճամաիքա, Հաիդի եւ Սէն-Տօմինիք, եւ 2. Փոքր Անդիլեանք, զոր իրենց մէջ բաժնած են Անգլիա, Ֆրանսա եւ Հոլանտա: Անգլիոյ սեփական կղզիներն են՝ Պարպուտա, Սէն-Քրիստօֆ, Նէվի, Անդիկուա, Մօնտէրրա, Տօմինիք, Սէնդ-Լիւսի, Լապառպատ, Սէն-Վէնսան, Կրընատ, Դօպալօ, Դրինիդէ: Ֆրանսայի կը պատկանին Սէն-Մարդէն, Սէն-Պարդէլմի, Կուատալուր, Մարդինիք՝ որ վերջին երկրաչարժէն աւերեցաւ: Հոլանտա ունի Սապա եւ Սէնդ-Էստաշ կղզիները:

Դաճիախան Անդիլեանք. — Կղզիներ, Ադրանտեան ովկէանոսի մէջ, Բորդո-Ռիքոյի արեւելեան կողմը: Այս կղզիներ երեք հատ են, Սէնդ-Քրուա, Սէն-Թօմա եւ Սէն-ժան: Առաջինին երկայնութիւնն է 40 քլմ. եւ լայնութիւնը 10: Մակերեսոյթ 193 քառ. քլմ. եւ բնակիչ 19,700 հոգի, որոց 9500ը միայն արու: Գործածական լեզուն անգլիերէնն է: Դիխաւոր երկու նաւահանգիստներն են Ֆրէտէրիքսդէտ եւ Քրիստիանսդէտ, ուր կը նստի երեք կղզիներու ընդհանուր կառավարիչը: Վաճառականութիւն Ամերիկայի, Դանիոյ եւ Ֆրանսայի հետ: Կ'արտածէ չաքար: Սէն-Թօմա կղզին Բորդո-Ռիքոյի արեւելեան կողմէն 57 քլմ. հեռու է: Ունի 62 քառ. քլմ. մակերեսոյթ եւ 12,000 բնակիչ, որոց 4600ը միայն արու: Անդիլեան կղզիներու վաճառականութեան գլխաւոր հրապարակն է: Պղտիկ նաւերը քարափին կը մօտենան, իսկ մեծ նաւերը կը խարսխեն նաւահանգստէն քիչ հեռու, զանազան կղզեակներու շնորհիւ հովերէն պաշտպանուած ապահով տեղ մը, որ 10 մէդր խորութիւն ունի: Նաւահանգստին բերանը կայ փարոս մը, որու լոյսը մինչեւ 19 քլմ. հեռուէն կը տեսնուի: Շոգե-նաւերու երթեւեկութիւն հաստատած են Դրանսադլանդիք, Համպուրթուադ, Քէպէք եւ Ռուայեալ Մէյլ շոգենաւային ընկերութիւնները: Փոխանակութիւնք կը կատարուին գլխաւորապէս Անգլիոյ Գերմանիոյ, Միացեալ Նահանգներու եւ Ֆրանսայի հետ: Սէն-ժան կղզին 4 քլմ. հեռու է Սէն-Թօմայի արեւելեան կողմէն: Ունի 55 քառ. քլմ. մակերեսոյթ եւ 984 բնակիչ: Երեք կղզիները մաքսային միեւնոյն սակազնին ենթարկուած են: Ներածեալ ապրանքները չորս դասակարգի կը բաժնուին: 37 տեսակ ապրանքներ, ինչպէս փայտ, երկաթ, մետաղներ եւն., 5 % մաքսատուրք կը վճարեն: 13 տեսակ ապրանքներ, ինչպէս ալիւր եւն., մասնաւոր տուրքի մը կ'ենթարկուին, օրինակի հա-

մար 100 քիլոյին 6,24 ֆր. եւն. : ծուցակին մէջ չխշուած ապրանքները կը վճարեն $12\frac{1}{2}\%$ մաքսատուրք : Վերջապէս 12 տեսակ ապրանքներ ալ, ինչպէս մեքենայ, հանքածուխ, պարարտացուցիչ նիւթեր, գիրքեւն, մաքսատուրքէ ազատ են : Միացեալ Նահանգներն առաջարկեցին այս կղզիները գնել Դանիայէն, $11\frac{1}{2}\%$ միլիոն ոսկիի, բայց բանակցութիւնք չյաջողեցան : Այժմ նորէն սկսած են բանակցութիւնք եւ կը յուսացուի թէ համաձայնութիւն պիտի գոյանայ :

ԱՆԴԻՎԱՐՈՒ. — Ծովային քաղաք, Ադրիականի վրայ, Ունի 1500 բնակիչ : Դրանգիդի կեդրոն փոխանակուած ապրանքներու, գլխաւորապէս հանքածուխի : Լոյսի շոգենաւերն երկու շաբաթն անգամ մը կը հանդիպին Անդրապարի :

ԱՆՈՂՈՒՆ. (1. Պատմականք. — 2. Պատմաստեքիւնք. — 3. Յատկութիւններ. — 4. Սպառուսք). — 1. Անիլինը կամ բնաւեղիճը 1826ին գտնուեցաւ Unverdorbenի կողմէ լեղահի (չիվիտ) չոր գրտուսին մէջ : Runge 1834ին, գտաւ զայն հանքածուխի գտնուսին մէջ : Անիլինը աշխատանոցի մէջ գործածելի մարմին մը մնաց մինչեւ այն օրն ուր յայտնի եղաւ թէ անիլիա, զանազան ազդեցութիւններու տակ, առաջ կը բերէր գունատու նիւթեր, որոնց արհեստական յաջողութիւնք մեծ եղաւ : Անոր տուին Անիլիներ (couleurs d'aniline) անունը : Անիլէ ի վեր, այս անունին տակ շինուեցան ուրիշ արհեստական գոյներ, որոնց մէջ անիլինին հիւլէն անգամ չկայ : Այս բոլոր գոյները պիտի ուսումնասիրուին « Գունասու Գիւթեր » բառին մէջ :

3. — Անիլինը իւղոտ մարմին մ'է որ գոյն չունի : Բայց իսակոյն գորշ գոյն մը կ'առնէ բաց օդին : Կ'եռայ 180° սանդիկրատի մէջ : Պաղ ջուրի մէջ 3% կը լուծուի : Թթուներու հետ կը կազմէ աղեր որք դիւրաւ կը լուծուին ջուրի մէջ : Անիլինը թունաւոր եւ կիւղիչ նիւթ մ'է : Մասնաւոր զգուշութիւն պէտք է մեծաքանակ անիլինի ձեռք դպցնելու համար : Վաճառականութեան մէջ կը գտնուի մանաւանդ Անիլինի իւղը, որ 180° եւ 183° սանդիկրատի միջեւ կ'եռայ : Կը կազմուի գրեթէ զուտ անիլինէ : Անիլիա ան է զոր ներկարարները կը գործածեն սեւ գոյն ստանալու համար : Գոյներու շինութեան համար կը գործածուի նաեւ կամփիւրի անիլին, որ կ'եռայ 190° եւ 200° սանդիկրատի միջեւ եւ կը պարուսնակէ միջին հաշուով 37% անիլին, 39% օրթօ-դօլիսին, 24%

1874

1874

1874

1874

1874

1874

1874

1874

1874

1874

1874

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱՐԱԹԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Նոր տարիին սկսեալ Հանրագիտակ հը հրատարակուի շաբաթական 20-24 էջ բաղկացեալ, եւ շաբաթը յամօյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վանականացի, 24 էջ:

Վեցամսեայ աւ իւրեանց ըստանորդագրութիւնը չընդունուիր:

ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆԷ

Պոխոյ համար

30 դրուշ

Գաւառաց

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

Առաջնորդ վանականացի 12 տեղի գաւառներէ ուղղող պէտք է վճարէ 12 դրուշ:

Հատը 30 փարայ

ՉԱՆԱՋԱՆ ՏԵՍԱԿ ԱՅՅԱԲԱՐԴԵՐՈՒ

ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆԵՐԸ

Մէկ լեզուէ միջակ թուղթ 100 հատը 7 ղշ:

Երկու » » » » » 9 »

Երեք » » » » » 11 »

Մէկ » ընտիր » » » 8 »

Երկու » » » » » 10 »

Երեք » » » » » 12 »

Ոսկեգօծ եզերքներով ընտիր թուղթ 16 »

» » գունաւոր » 17 »

» թրթրլը եզերք. ճերմակ » 17 »

» » » գունաւոր 18 »

Թուրքերէն Սիւլիս, Թաալիւք եւ Րըգգա գրով փորագրեալ այցաքարդերուն համար՝ 12 դրշ: աւելի ծախք մը վճարել պէտք է: Լուսանկարով միասին տպագրեալ այցաքարդերուն 100 հատը 60 դրշ:

Գաւառներէ եղած յանձնարարութեանց համար թղթատարի ծախք չի պահանջուիր: Վճարմունք կանխիկ են: